ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

04.12. 2014թ.

Նիստին մասնակցում էին՝ Ս. Ամիրխանյանը, Ա. Հովեյանը, Գ. Ղարիբյանը, Ա. Մարուխյանը, Ս. Գապոյանը, Պ. Սինանյանը, Մ. Մարինոսյանը, Կ. Խաչիկյանը

Նիստը վարող՝ քաղաքապետի ժ/պ Գրիգոր Բոշյան

Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Գավառ համայնքի 2014թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2. Գավառ համայնքի 2014թ. բյուջեի պահուստային ֆոնդից գումար տրամադրելու մասին:
3. ,,Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան" պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող տարածքը մշակույթի նախարարությանը նվիրաբերելու կամ անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով գրադարանին տրամադրելու մասին:
4. ,,Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան" պետական ոչ առևտրային կազմակերպության անվանափոխության հարցի քննարկման մասին:

Հարց 1

ՈՐՈՇՈՒՄ 61. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին մասի 1 կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի, ,,Հայատանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 33 հոդվածի 4-րդ կետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2014թ. բյուջեում կատարել փոփոխություն

1.Գավառ համայնքի ավագանու 20.01.2014թ. թիվ 1 նիստի թիվ 1 որոշման 9-րդ կետի 4-րդ պարբերության ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորվող 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ/ գործառնական դասակարգման 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 3500.0 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամից՝

ա/ 3100.0/երեք միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամը ֆինանսավորել ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին

բ/ 200.0 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամը պակասեցնել, որն ավելացնել 1 բաժնի 3 խմբի 3 դասի /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ գործառնական դասակարգման 5132 /ոչ նյութական հիմնական միջոցներ/ տնտեսագիտական հոդվածին՝ համակարգչային ծրագիր ձեռք բերելու համար:

Միաժամանակ Գավառ համայնքի ավագանու 20.01.2014թ. թիվ 1 նիստի 1 որոշման 11-րդ կետի 3-րդ պարբերությամբ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին ֆինանսավորվող 08 բաժնի 6 խմբի 1 դասի /հանգիստ, մշակույթ և կրոն/ այլ դասերին չպատկանող// գործառնական դասակարգման 5112 /շենք և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 5995.1 /հինգ միլիոն ինն հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամից 3100.0 /երեք միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամը ֆինանսավորել ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

2. 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 820.0 /ութ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամով, որից՝

ա/ 480.0 /չորս հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 09 բաժնի 5 խմբի 1 դասի /արտադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4655 /կապիտալ դրամաշնորհ ՀՈԱԿ-ներին/ տնտեսագիտական հոդվածին՝ Արվեստի դպրոցի պարասրահների հենակների ձեռք բերման համար

բ/ 190.0 /մեկ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 09 բաժնի 1 խմբի 1 դասի /նախադպրոցական կրթություն /գործառնական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին

գ/ 150.0 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 08 բաժնի 2 խմբի 3 դասի /մշակույթի տներ/ գործառնական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին:

3. 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող// գործառնական դասակարգման 4241 /մասնագիտական ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 960.0 /ինն հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամով, որից՝

ա/ 300.0 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատանող// գործառնական դասակարգման 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ տնտեսագիտական հոդվածին
բ/ 450.0 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը ավելացնել 10 բաժնի 7 խմբի 1 դասի /սոցիալական հատուկ արտոնություններ/ գործառնական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածին
գ/ 210.0 /երկու հարյուր տաս հազար/ ՀՀ դրամը ավելացնել 09 բաժնի 1 խմբի 1 դասի /նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին:
4. 01 բաժնի 3 խմբի 3 դասի /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ գործառնական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 25.0 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամով, որը ավելացնել նույն նախահաշվի 4212 /էներգետիկ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին:
5. ա/ 06 բաժնի 3 խմբի 1 դասի /ջրամատակարարում/ գործառնական դասակարգման 4212 /էներգետիկծառայություններ/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 3800.0 /երեք միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամը պակասեցնել 400.0 /չորս հարյուր հազար/ՀՀ դրամով:
բ/ 08 բաժնի 2 խմբի 4 դասի /այլ մշակութային կազմակերպություններ գործառնական դասակարգման 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 2500.0 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամից պակասեցնել 350.0 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
Պակասեցված գումարները՝ 750.0 /յոթ հարյուր հիսուն/ հազար ՀՀ դրամ ավելացնել 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող// 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ տնտեսագիտական հոդվածին՝ քաղցրավենիքների տոպրակների ձեռք բերման համար:

Կողմ ( ) Դեմ () Ձեռնպահ ()

Հարց 2
ՈՐՈՇՈՒՄ 62. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Տ. Բրսիկյան/

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2014թ. բյուջեի պահուստային ֆոնդից՝
4819 /նվիրատվություն բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 100.0 /մեկ հարյուր/ հազարական ՀՀ դրամ

1.,,Հայաստան'' համահայկական հիմնադրամի կողմից 2014թ. նոյեմբերի 27-ին կայանալիք ,,Հեռուստամարաթոն 2014''–ին՝ Վարդենիս-Մարտակերտ ավտոմայրուղու շինարարությանը աջակցելու նպատակով:
2.,,Հայոց Արծիվներ'' հայենասիրական հասարակական կազմակերպությանը՝ ռազմահայրենասիրական միջոցառումների կազնակերպչական աշխատանքներին աջակցելու նպատակով:

Կողմ () Դեմ () Ձեռնպահ ()

Հարց 3

ՈՐՈՇՈՒՄ 63. ,,Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ'' ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Գևորգյան/

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածի 20 կետով, նկատի ունենալով, որ ,,Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան'' պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող տարածքը մշակույթի նախարարությանը նվիրաբերելու կամ անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով գրադարանին տրամադրելու համար ՀՀ մշակույթի նախարարությունը դիմել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն և Գավառ քաղաքապետարան, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Նպատակահարմար չհամարել Գավառ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող՝ քաղաք Գավառ, Զորավար Անդրանիկի փողոց թիվ 34 հասցեում գտնվող վարչական շենքի՝ ,,Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան'' պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից զբաղեցրած տարածքը ՀՀ մշակույթի նախարարությանը նվիրաբերելը կամ անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով գրադարանին տրամադրելը, այլ համաձայնություն տալ, որ Գավառի քաղաքապետարանի և ,,Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան'' պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված գույքի վարձակալության պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, ճանաչվի վերսկսված՝ նույն պայմաններով, անորոշ ժամկետով:

Կողմ () Դեմ () Ձեռնպահ ()

Հարց 4

ՈՐՈՇՈՒՄ 64. ,,Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ'' ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/զեկ. Ա. Աղամալյան/

Համաձայն Գեղարքունիքի մարզպետարանի կողմից ուղարկված գրության, Գեղարքունիքի մարզային գրադարանի անվանափոխության համար Գավառ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվեց մշակույթի գործիչների թեկնածությունները: Ավագանու մի քանի անդամներ հավանության արժանացրին Լևոն Բլբուլյանի թեկնածությունը: Միաժամանակ Ս. Ամիրխանյանը առաջադրեց նշանավոր բանաստեղծ Պահարեի /Հայկ Սեդրակի Պետրոսյան/ թեկնածությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև հաջորդ նիստ առավել մանրակրկիտ ուսումնասիրել 2 թեկնածությունները և առաջադրել համապատասխան թեկնածուի անունը:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ,,ԳԱՎԱՌԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ''
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ
ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 12) և 17) կետով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 7 նիստի թիվ 65 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2014թ. դեկտեմբերից Գավառ քաղաքի Կենտրոնական Հրապարակ թիվ 3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ,,Գավառի մշակույթի տուն'' համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի 1-ին հարկի 113.8ք.մ., 2-րդ հարկի 22.8ք.մ. և 3-րդ հարկի 66.0ք.մ. մակերեսներով տարածքները տրամադրել վարձակալությամբ:
   Որպես ամենամսյա վարձավճար սահմանել
   1) 1-ին հարկի 97.4ք.մ. տարածքի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ, իսկ 16.4ք.մ. տարածքի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:
   2) 2-րդ հարկի 11.6ք.մ. և 11.2ք.մ. /ընդամենը՝ 22.8ք.մ./ մակերեսներով յուրաքանչյուր տարածքի համար՝ 5 000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:
   3) 3-րդ հարկի 33.0ք.մ. և 33.0ք.մ. /ընդամենը՝ 66.0ք.մ./ մակերերսներով յուրաքանչյուր տարածքի համար՝ 5 000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավատնտեսագիտական բաժնին Գավառ քաղաքի բնակիչներ Բաբկեն Աշոտի Խաչիկյանի, Լիլիթ Կարապետի Տոնոյանի, Ահարոն Ավետիքի Սողոմոնյանի, Արտաշես Ավետիքի ՈՒրմշաատյանի ինչպես նաև անհատ ձեռնարակտեր ,,Նինա Մուսոյան Ֆրիկի'' հետ կնքել համապատասխան 66.0ք.մ., 11.2ք.մ., 11.6ք.մ., 16.4ք.մ., 97.4ք.մ. մակերերսներով տարածքների վարձակալության պայմանագրեր:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին'' ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի և ,,Տեղական Ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 16 հոդվածի 2 մասի դրույթներով, նկատի ունենալով, որ ,,ՈՒնիվերսալ Բազա'' ԲԲԸ-ն վճարել է գույքահարկի մայր գումարները, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Զիջել ,,Ունիվերսալ բազա'' ԲԲԸ-ի /ՀՎՀՀ08409065/ 168 550 /մեկ հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գույքահարկի գծով տույժը:

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
առաջատար մասնագետ Ա. Բոշյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
քարտուղար Կ. Մանուկյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
իրավատնտեսագիտական բաժնի պետ Ա. Գևորգյան

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍ, ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ N37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0018ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ԿՐՊԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետի և ՀՀ կառավարության 12.04.2006թ. 286 որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Հացառատ թաղամաս Բուռնազյան փողոց N37/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության 0.0018հա մակերեսով հողամասը՝ առևտրի կրպակ կառուցելու նպատակով `կառուցապատման իրավունքով տրամադրելու մասինն առաջարկին և հողամասի վարձավճարի չափը սահմանել տարեկան 8000 /ութ հազար/ ՀՀ դրամ մինչև 2020թ. ներառյալ օգտագործման ժամկետով:

Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի
գլխավոր մասնագետ Ա. Ալեքսանյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
քարտուղար Կ. Մանուկյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
իրավատնտեսագիտական բաժնի պետ Ա. Գևորգյան

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԳԻԾ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.23188ՀԱ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի դրույթներով,հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի ,,Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին'' թիվ 286 որոշումը և Գավառի քաղաքապետի առաջարկությունը՝ 0.23188հա էներգետիկայի օբյեկտների հողերը ուղղակի վաճառքով օտարելու մասին, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդուսացող էներգետիկայի, կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների ,,էներգետիկայի օբյեկտների հողեր'' գործառնական նշանակության հողերից ,,Բարձրավոլտ էլցանցեր'' ՓԲԸ-ին Իրան-

Հայաստան 400կվ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման համար, ուղղակի վաճառքի կարգով օտարել 0.23188հա, 15 /տասնհինգ/ միավոր հողամաս, մեկ քառակուսի մետրը 1242 /հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ արժեքով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի
գլխավոր մասնագետ Մ. Մանուկյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
քարտուղար Կ. Մանուկյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
իրավատնտեսագիտական բաժնի պետ Ա. Գևորգյան

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, ,,Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի ,,Հողերի ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին'' 1918-Ն որոշման և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2013թ. մայիսի 20-ի 43 եզրակացության որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման սխեմայում՝ համաձայն հավելվածի բնակավայրերի նշանակության հողերից 0.09257հա այլ հողեր,

գյուղատնտեսական նշանակության հողերից 0.13232հա փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ,,Էներգետիկայի օբյեկտների հողեր'' գործառնական նշանակությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հրազդան ՋԷԿ-Շինուհայր ենթակայան 220 ԿՎ էլեկտրահաղորդման օդային գծի /հենասյուների կառուցման և սպասարկման համար:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի
գլխավոր մասնագետ Մ. Մանուկյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
քարտուղար Կ. Մանուկյան

Գավառ համայնքի ղեկավարի աշխատակազմի
իրավատնտեսագիտական բաժնի պետ Ա. Գևորգյան